




Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ




Պր 6



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ






ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ ھانراکيداق HANRAKIDAG

ՇԱՐԱԹԱԿԱՆ مجموعتعلوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Է. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ ॥ ԹԻԻ 6 ॥ 14 ՓԵՏՐԻՈՒՐ 1904



ԿՏԱԿ ԲԵՐԹՈՂԻՆ

Ա.Ռ. ՆՈՒՆ

Իմ այս տղեր բարեկամի,
Հարսնենուագ Ձօն մտերմի,
Չ'է՛ լոկ, ՀԱՅԿՈՒԿ, պարզ Յիշատակ,
Կտակեմ ալ Քեզ հրիտակ
Քերթողական այս բաց նամակ.
Սիրես հոն դրեր իր հուրեն համակ:

« Վա՛ր ձայնով

« Թող լեզու տայ Քու զիլ դառնակ

« Հոգեթով

« Վանկերուն,

« Ոյց տուաւ շո՛ւնչ, լո՛յս հեղինակ՝

« Փրփրուն:

« Զանոնք երգես հոգիես.

« Հազար ու մէկ սոգիես.

« Երգես սիրեղ

« Սիրաւես,

« Բիւր ձայներու կիբառ սիրեղ:

« Յոք լուսինկայ

« Արժաբանանչ

« Ու ման կուգայ

« Ծով դաւ՝ կանանչ:

« Երբ վարդին նաժիս

« Գարնան երաժիս

« Դալայիկ պալուլ,

« Պուրակն ու ծմակ,

« Երբ ոսկի սմբուլ

« Հովիտին եմակ

« Խնկոսե զեփիւռ

« Ու մարզն համապիւռ » :

Թե եւ նոնի

Շիրիմ ճոնի

Իմ վերայ,

Ի Դաբերայ

Վերն երկինքին .

Դեռ ես լսեմ

Ձայնդ վսեմ :

Հոգիս՝ հոս նժղեմ .

Երկինքն՝ իւր բուն դեմ

Դե՛հն Անմահի

Ու ամենի .

Հոս հասնում՝

Հոն Ասում .

Ձայնն երբ հնչէ

Արարիչ է :

Արարիչ է,

Երբ երգիչ է :

« Երգ չունին չարեր » ,

Ըսաւ մեզ Շիլլեր :

Ճակասս հոն

Երկնայօն՝

Ջուս խնդում

Անհրոնմ,

Ջերբ Լուսին

Իմիասին՝

Կախ կանթեղ

Լուսանեղ

Պատգամեղ

Յասմիկաւէս՝

Երբ գայ գիշեր

Մաղել սուներ ,

Երբ բու Դաւնակ

Ամէ նուագ

Դեղաբիսակ

Մասներուդ ակ .

Նուագ արժովն

Ջոր գիտէ մեր վին :

Հոգիս՝ վե՛րք հրեշտակ

Հայր Ասումածին սուրհանդակ ,

Ամէն ժամ , ամէն իծիր

Այցելու ժիրաժիր

Բոյլերուն զմբէթէ

Պիտի նառագայթէ .

Պայծառագեղ Ուրիոն

Ծիածանին հորիզոն :

Դիտել վարք Վեհն ԱՆՈՅՇ ,

Լուսածղին ՀԱՅԿԱՆՈՅՇ .

Գոգ մը Բնար հոգեհաւիղ

Գոգնոց մը սէր լուսաշաւիղ

Երբ բազմած յնսանն անհոյժ

Պերենն ու ամուր Սարաւոյժ ,

Ըմպեն նեկսար Գողթանին .
 Երգեն փառքը Հարց Եղեմին ,
 Փա՛ռքն Եւային , Աղամին :

Ապա Հայկուկ ,
 Դուն հարսն հմուկ .

Իմ կնկնոց՝
 Տերեւք քփոց ,
 Բոլորք ի հիւս՝

Հարս ճակիդ կիւս .

Օ՛ն , քող մեծ Մայր ,
 ՄԱՅՐՆ եղերամայր
 Ըլլա՛յ խնդամայր ,
 Ապրի՛ յամս յամայր .

Ու ասս ի խոնարհ ,
 Թո՛ղ քնդայ աշխարհ ,
 ԱՆՈՐ դերբուկներ

Ըլլայ դրախտ
 Նոր բախտ :

Թեեւ կեանքն է միշտ սառապանք
 Ու տաղտապանք ,
 Բայց սերն անոր այլ բիւր հեռանք ,
 Բիւր բիւր հրնուանք .

Ու բիւրից բիւր անմահ խախնանք
 Մաղթեմ որ լինիս կեանքի խնջոյքին
 Կոչնական տոմարի ու երջանկագին :
 Հայրիդ , Եղբայրիդ ու անուշ Մայրիդ
 Ըլլաս խնդուքիւն պսակն ալ ժիր այրիդ :

Պսակդ անքառամ ,
 Սերունդդ յոգներամ .

Հարսն ես երջանիկ
 Լեւ մայրն ուսանիկ .

Մեջ մարցն ու տիկնանց
 Մայր , կին զերազանց :

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՁՈՋ ԱՂԱՅԻ ՄԸ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ

Ատենօք Աղա մը կար որ չափազանց կը սիրէր նոր հագուստները և իր ամբողջ ստակը իր արդուզարդին կը վատնէր: Երբոր սպասաւորներուն առջեւէն սոնքալով կ'անցնէր՝ ամէն կողմ յարգանք սփռելու համար, երբոր թատրոն կ'երթար կամ պտոյտի կ'ելլար, իր նոր հագուստները ցուցնելու նպատակաւ էր միայն: Օրուան ամէն մէկ ժամուն հագուստ կը փոխէր, և ամէն կողմէ կը փսփսային թէ « Աղան իր հանդերձարանն է »: Իր ապրած քաղաքը գուարթ ու հին քաղաք մըն էր ուր գրեթէ միշտ կուգային օտարական անցորդներ: Բայց օր մը հոն երկու խաբեբաներ եկան որոնք ինքզինքնին կտաւագործներ ձեւացուցին և հռչակեցին թէ՝ իրենք աշխարհիս ամէնէն սքանչելի կերպսը կրնային գործել: Ոչ միայն գոյները և նկարները տարօրինակէս գեղեցիկ էին, այլ այս կերպասով պատրաստուած հագուստները հիանալի յատկութիւն մը ունէին, այսինքն անոնք անտեսանելի կը մնային ամէն անոնց՝ որոնք իրենց պաշտօնը լաւ կատարել չէին գիտեր, կամ շատ սահմանափակ միտք մը ունէին:

— Անգին հագուստներ են, մտածեց Մենծ աղան, չնորհիւ այդ հագուստներուն պիտի կրնամ ճանչնալ իմ անկարող ու ճարպիկ ծառաներս. այո՛, այս կերպսը ինծի անհրաժեշտ է:

Կանչեց երկու խաբեբաները և խոշորկեկ գուժար մը վճարեց կանխաւ, որպէս զի կարենան անմիջապէս գործի սկսիլ: Արդարեւ երկու գործասեղան պատրաստեցին և աշխատիլ ձեւացուցին թէեւ ճախարակներուն վրայ բնաւ բան չկար: Անդադար ազնիւ մետաքս և սքանչելի ոսկի կ'ուզէին. բայց բոլորն ալ իրենց պայուսակին մէջ կը դնէին. մինչեւ կէս գիշեր աշխատելով պարապ գործասեղաններուն վրայ:

— Պէտք է գիտնամ թէ ո՛րչափ կարեցին, ըսաւ ինքնիրեն Մենծ աղան:

Բայց սիրտը սեղմուեցաւ մտածելով որ տխմար կամ իրենց պաշտօնին անյարմար եղողները կերպսը չպիտի կարենային տեսնել: Իրաւ է որ իր վրայ չկասկածեցաւ թէ անկարող անձ մըն էր գործերուն մէջ՝ սակայն աւելի յարմար դատեց մէկը զրկել իրմէ առաջ աշխատութիւնը քննելու համար: Քաղաքին բոլոր բնակիչները կերպսին սքանչելիութիւնը գիտէին և ամէնքը անհամբերութեամբ կը տոջորուէին գիտնալու համար թէ իրենց դրացին որչափ կարճամիտ և ապիկար էր:

— Կտաւագործներուն իմ ծերուկ վերակացուն կը զրկեմ

մտածեց Աղան, անիկա լաւ կրնայ քննել կերպասը, անիկա իր խորհուրդներուն մէջ աւելի մտացի է քան իր գործերուն մէջ:

Պարկեշտ ծերուկը երկու խաբերաններուն սենեակը մտաւ ուր պարապ գործասեղաններով կ'աշխատէին:

— Աստուած իմ, մտածեց աչքերը խոշոր մը բանալով, հոս բան մը չեմ տեսնար կոր ես:

Բայց բառ մը չարտասանեց: Երկու կտաւագործները զայն յորդորեցին որ մօտենայ, և անոր հարցուցին թէ՝ նկարը և գոյները ի՞նչպէս կը գտնէր: Միեւնոյն ժամանակ ցուցուցին իրենց գործասեղանները, և ծերուկը նայուածքը ուղղեց, բայց բան մը չտեսաւ — Է իրօք ալ բան մը չկար որ տեսնէր:

— Աստուած իմ, մտածեց, իրաւցնէ՞ կարճամիտ պիտի ըլլամ, պէտք է որ մարդ չտարակուսի: Իրաւցնէ՞ ապիկար պիտի ըլլամ. չեմ համարձակիր խոստովանիլ թէ կերպասը ինծի անտեսանելի կը թուի:

— Ուրեմն ի՞նչ կ'ըսէք դուք, ըսաւ կտաւագործներէն մէկը:

— Սքանչելի, բոլորովին սքանչելի, պատասխանեց հինօրեայ մատակարարը՝ ակնոցը դնելով: Այս նկարը և այս գոյները... այո՛, պիտի ըսեմ Աղային թէ շատ գոհ մնացի:

— Մեզի բարեբախտութիւն մը կը սեպենք այդ գովեստին արժանանալնիս, ըսին երկու կտաւագործները, և սկսան անոր երեւակայական նկարներ ու գոյներ ցուցնել՝ ամէնուն մէյմէկ առնունք տալով: Ծեր մատակարարը շատ մեծ ուշադրութեամբ մտիկ ըրաւ՝ անոնց բոլոր բացատրութիւնները աղային կըրկնելու համար:

— Խաբերանները միշտ ստակ, մետաքս և ոսկի կ'ուզէին գորս մեծ քանակութեամբ այս կտաւին կը վատնէին: Յայտնի է որ ամէնն ալ կը պրպանէին, գործասեղանը պարապ կը կենար եւ անոնք միշտ կ'աշխատէին:

Քիչ մը ատեն վերջը Աղան ուրիշ պարկեշտ պաշտօնատար մը զրկեց կերպասը քննելու և տեսնելու թէ կը լմնա՞ր: Նոր պատգամաւորին ալ նոյն բանը պատահեցաւ. կը նայէր եւ միշտ կը նայէր, բայց բան մը չէր տեսնար:

Երկու խաբերանները ցուցնելով եւ բացատրելով չքեղ նկարը եւ գեղեցիկ գոյները՝ որոնք գոյութիւն չունէին:

— Սակայն, կարճամիտ մը չեմ ես, կը մտածէր մարդն, Ուրեմն ես իմ պաշտօնս չեմ կրնար կատարել: Շատ զարմանալի է, բայց պիտի զգուշանամ զայն չկորսնցնելու համար:

Յետոյ կերպասը գովեց, և հիացումը յայտնեց գոյներուն եւ նկարին ընտրութեանը համար:

Վերջապէս Աղան անձամբ տեսնալ ուզեց զայն, քանի որ գործասեղանին վրան էր տալաւին: Ընտրուած մարդիկներու բազմութեան մը հետ մէկտեղ, որոնց մէջ կը գտնուէին երկու պարկեշտ բարեկամները, խաբեբաներուն առջեւ ներկայացաւ, որոնք ճիշդ կը գործէին, բայց առանց մետաքսի, ոսկի թելի և նոյն իսկ ոչ մէկ տեսակ դերձանի: — Սքանչելի՛ է, անանկ չէ՞, ըսին երկու բարեկամները: Նկարն եւ գոյները ձեզի արժանի են: Եւ մատով ցուցուցին պարապ գործասեղանը, իբրեւ թէ իրենք հոն բան մը կրցած էին տեսնել:

— Աս ի՞նչ է, մտածեց աղան՝ բան մը չեմ տեսնար: Սոսկալի է: Ի՞նչ, ապո՞ւշ մը պիտի ըլլամ, իմ գործերուս մէջ անկարո՞ղ մը: Ինծի ասկէ աւելի մեծ դժբաղդութիւն մը չի կրնար պատահիլ:

Յետոյ մէկէն ի մէկ պօռաց, — Սքանչելի՛ է, իմ բոլոր գոհունակութիւնս եւ հիացումս կը յայտնեմ:

Գլուխը շարժեց գոհ երեւոյթով մը, եւ գործասեղանը նայեցաւ, առանց ճշմարտութիւնը ըսել համարձակելու: Բոլոր իրեն հետեւող մարդիկները հոն կը նայէին, բայց բան մը չէին տեսնար, եւ աղային ըսածները կը կրկնէին. — Սքանչելի՛ է:

Անոր խորհուրդ կուտային որ այս նոր հագուստն առաջին անգամ կիրակի օրը հագած եկեղեցին թափօրին առաջնորդէ:

— Սքանչելի՛ է, հիանալի՛ է, զմայլելի՛ է, կ'արտասանէին բոլոր բերանները, և գոհունակութիւնն ընդհանուր էր:

Երկու խաբեբաներն առատօրէն վարձատրուեցան, եւ ազնւական կտաւագործ տիտղոսը ստացան:

Եկեղեցական թափօրին նախորդ գիշերն ամբողջ անքուն անցուցին եւ աշխատեցան տասնըվեց մոմերու լոյսով:

Ամէն մարդ կը տեսնար թէ որքան կը նեղուէին դերձակները: Վերջապէս, գործասեղանին վրայէն հանեցին, օդին մէջ մեծ մըկ-րատով մը կտրեցին, որմէ ետքը յայտարարեցին թէ հագուստը լինցած էր:

Աղան իր ծառաներով զայն քննել գնաց, եւ խաբեբաները, մէկ ձեռքերնին վեր առնելով օդին մէջ, իբրեւ թէ բան մը բռնած ըլլային՝ ըսին. — Ահաւասիկ տափատն, կրկնոցն. ահա՛ վերարկուն. սարդի ոտայնին պէս թեթեւ է. Բնաւ վախ չի կայ թէ ձեր մարմնոյն վրայ կը ճնշէ. եւ ահաւասիկ թէ ո՛ւր կը կայանայ այս կերպատին ճշմարտութիւնը:

— Հարկա՛ւ, պատասխանեցին ծառաները, բայց բան մը չէին տեսներ, որովհետեւ բան մը չկար:

— Եթէ ձեր ազնուութիւնը բարեհաճի հագուել, ըսին երկու խաբեբաները, հագուստները մեծ հայելէին առջեւ պիտի փորձենք:

Աղան հանուեցաւ, եւ խարերաները անոր յաջորդաբար կտորներ ներկայացուցին:

Անոր մարմինն բան մը անցունելու պէս ըրին: Հայելին առջեւ ինքզինքը դիտեց, դարձաւ նորէն գոչեց. — Աստուած իմ, ի՞նչ աղուոր վայլեց: Ի՞նչ վարպետ, պօռացին բոլոր ներկաները:

Թափորին առաջնորդը ներս մտաւ. — Ամպհովանին, որուն տակ ձեր ազնուութիւնը ներկայ պիտի գտնուի՝ եկեղեցիին դուռը կը սպասէ, ըսաւ:

— Լաւ, պատրաստ եմ, պատասխանեց աղան. կարծեմ թէ ասանկ գէշ չեմ:

Եւ անգամ մըն ալ հայելին առջեւ դարձաւ՝ լաւ մը նայելու համար իր չքեղ տեսքին:

Սենեկապանները որոնք պէտք է փեռերը բռնէին, այնպէս ձեւացուցին թէ գետնէն վեր կը վերցունէին:

Երբոր Մենծ աղան թափորին առջեւէն գոռօղաբար կը յառաջանար զմայլելի ամպհովանիին տակէն, ամէն մարդ փողոցին մէջ եւ պատուհաններէն կը պօռային. — Ի՞նչ թանկագին հագուստ, ի՞նչ չքեղ է:

Ոչ մէկը կը ձգեր որ իրեն բան մը չտեսնալը հասկցուի. որովհետեւ յայտնած պիտի ըլլային թէ կարճամիտ կամ անկարող են գործ կատարելու: Մենծ աղային հագուստներն երբեք ուրիշներու ասանկ հիացում չէր ազդած:

— Բայց ինծի անանկ կուգայ որ, անիկա բնաւ հագուստ չունի, դիտեց պզտիկ տղայ մը:

— Տէ՛ր Աստուած, անմեղութեան ձայնը կ'իմանամք, ըսաւ հայրը:


Եւ չուտ մը բազմութեան մէջ տղուն խօսքերը կրկնելու փրսփրսութեամբ մը սկսաւ:

— Պզտիկ տղայ մը կայ, որ կ'ըսէ թէ Աղան բնաւ հագուստ չունի: — Բնաւ հագուստ չունի՞, վերջապէս պօռաց ժողովուրդը:

Աղան շատ պզտիկ մնաց, որովհետեւ իրեն անանկ կ'երեւար որ իրաւունք ունէին: Սակայն խորհեցաւ ու վճռեց.

— Ի՞նչ որ ալ ըլլայ. պէտք է որ մինչեւ վերջը կենամ:

Յետոյ, աւելի գոռոզութեամբ նորէն կանգնեցաւ, և սպասաւորները աւելի մեծարանքով կը շարունակէին բռնել իր քեռերը:



ԶՈՒՍՐՃԱԼԻՔ

Տասը տարեկան Լեւոն նպարավաճառին երթալով՝ կ'ըսէ .

1 օխա չաքար 2 ղրուշնոց, $\frac{1}{2}$ օխա կարագ իւղ՝ քաշը 13-նոցէն, 3 օխա բրինձ 3 ղրուշնոցէն, 1 օխա պանիր 11-նոցէն . եթէ երկու մէծիտ տամ, ի՞նչ ետ պիտի տաս :

Նպարավաճառը՝ տղուն ըսածները թուղթի մը վրայ հաշուելով՝ կը պատասխանէ . $11\frac{1}{2}$ ղրշ, տղաս :

Լեւոն, թուղթը ձեռքէն յափշտակելով . — Շնորհակալ եմ, պարոն, վաղուան թուաբանութեանս խնդիրն էր, ու պատասխանը գտայ, ըսելով դուրս կը վազէ :

* * *

Բնապատմութեան դասատուն քունի վրայ կը դասախօսէր : Այն միջոցին պզտիկ տղայ մը կ'սկսի քնանալ :

— Արմենա՛կ, Արմենա՛կ, ի՞նչ կ'ընես, ամթ չէ՞ :

— Ներեցէք, միւսիւ, մտիկ կ'ընեմ կոր, քունի վրայ ոնանկ աղուոր բաներ կ'ըսէք որ քունս եկաւ :

* * *

— Միւսի՛ւ, համարձակութեանս կը ներէք, բայց դուք ալ այս առաւօտ քառորդ մը ուշ եկաք . երբ մենք 5 վայրկեան ուշանանք՝ երեկոյին կէս ժամ վար կը դնէք մեզի՝ իրեւ յանցաւոր :

— Շատ լա՛ւ . շատ լա՛ւ, տղաքներս, դուք ալ ամենքդ միասին այս երեկոյ մէկուկէս ժամ վար դրէք զիս :

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՀՆՐԱԳԻՐՈՒԹԵԱՆ ՆԻԻԹ ՄԸ

« Վերջէն խնդացողը աղէկ պիտի խնդայ » կ'ըսէ առածը : Այս երկու պատկերներուն պատմութիւնը կը հաստատէ այդ : Մեր սրամիտ ընթերցողները կրնան լաւ շարադրութիւն մը գըրել այս նիւթին վրայ . երբ գրեն ու աղէկ մը սրագրեն, թո՛ղ մաքուրն առնեն ու մեզի ղրկեն, իրենց անունը, վարժարանն ու թուականը դատ զատ յիշելով : Ասոնցմէ լաւագոյնը պիտի հրատարակենք Հանրագիտակի մէջ, ու ամէնալաւ գրողին մէկ տարեկան թերթ պիտի նուիրենք : (Եթէ ինք արդէն բաժանորդ է մեզ կրնայ իր անունով ո՛ր եւ է որբանոցի կամ աղքատիկ վարժարանի մը նուիրել զայն) :



Absorption

Ջերմութեան ծծումբ. — (Բնագիտ.) Երբ ջերմութեան ճառագայթներու խուրձ մը մարմինի մը կը հանդիպի, քանի մը երեւոյթներ յառաջ կուգան. ջերմութեան մէկ մասը կը ցոլանայ մարմինին երեսին վրայ, միւս մասը կը ցրուի և երրորդ մաս մըն ալ կ'անցնի անոր մէջէն եթէ մարմինը թափանցիկ է: Եթէ այս ցոլացած, ցրուած և թափանցած ջերմութիւններու գումարը առնենք պիտի տեսնենք որ պակաս կուգայ մարմինին վրայ նախապէս ինկող ջերմութեան քանակութենէն: Այս տարբերութիւնը կազմող ջերմութիւնը ծծումբ է մարմինէն: Հաստատուած է որ կատարելապէս թափանցիկ մարմին մը չտաքնար երբ ճառագայթող ջերմութեան մը ճամբուն վրայ կը գտնուի, ոչ ալ այդ ջերմութիւնը իր արագութիւնը կը կորսնցնէ, մինչդեռ ոչ-թափանցիկ մարմին մը այդ ջերմութիւնը ծծելով կը տաքնայ եւ ջերմութիւնն ալ կամաց կամաց կը տարածուի անոր մէջ: Մարմիններու ջերմութեան ծծիչ զօրութիւնը որոշելու համար կ'առնեն ջերմաչափ մը և զայն հետզհետէ կը ծածկեն զանազան մարմիններով որոնք ծծիչ զօրութիւնը հասկնալ կ'ուզեն և միեւնոյն ջերմութեան աղբիւրին կ'ենթարկեն: Ջերմաչափը տաքնալով կը բարձրանայ և կէտի մը վրայ կանգ կ'առնէ ան պահուն երբ միեւնոյն ժամանակի մէջ ընդունած ու կորսնցուցած տաքութիւնները իրարու կը հաւասարին: Կը բաւէ ուրեմն գտնել թէ մէկ վայրկեանի մէջ ինչ տաքութիւն կը կորսնցնէ՝ հաշուելու համար նոյնքան ժամանակամիջոցի մէջ ո՛րքան ընդունիր: Ասոր համար մէկ վայրկեանի չափ ջերմաչափը կը ծածկեն ջերմութեան աղբիւրէն. սնդիկը վար կ'իջնայ. այդ խոնարհման աստիճանին միջոցաւ կը կազմեն համեմատութիւն մը որ ջերմաչափը ծածկող նիւթին ծծիչ կարողութիւնը կուտայ: — Ամէնէն շատ ջերմութիւն ծծող մարմինը մուրն է. իր վրայ ինկած բոլոր ջերմութիւնը կը ծծէ. երբ կ'ուզենք որ մարմին մը շատ տաքնայ՝ անոր երեսը ծածկելու է մուրով, իսկ չտաքնալիք առարկաներու երեսը կը ծածկեն ողորկ մետաղեայ մակերեսով մը: — Կազերն ու շոգիներն ալ կը ծծեն ջերմութիւնը: Քանի կրած ճնշումին աւելնայ այնքան կ'աճի իրենց ծծիչ կարողութիւնը. խոնաւ օդը՝ չոր օդէն շատ աւելի ջերմութիւն կը ծծէ:

Լոյսի ծծումբ. — (Բնագիտ.) Երբ լոյսի ճառագայթ մը թափանցիկ միջավայրէ մը կ'անցնի, դուրս ելլող ճառագայթը՝ մարմինին վրայ ինկած ճառագայթէն նուազ զօրաւոր է, լոյսին մէկ մասը ծծուած է այդ միջավայրէն: Դիտուած է որ բոլոր մարմիններն ալ բաւականաչափ նրբութիւն մը առնելով լոյսի ճառագայթը կ'անցնեն իրենց մէջէն, ուրեմն կրնանք ըսել թէ անթափանց մարմին չկայ, նոյնպէս կրնանք ընդունիլ թէ կատարելապէս թափանցիկ մարմին չկայ, հետեւաբար բոլոր մարմիններն ալ քիչ կամ շատ քանակութեամբ կը ծծեն լոյսը. այդ քանակութիւնը կը փոխուի մարմինին նիւթին, թանձրութեան ու բարեխառնութեան համեմատ, որքան թանձր ու տաք ըլլայ այնքան շատ լոյս կը ծծէ, Կան մարմիններ ալ որոնք անհաւասար քանա-

Absorption

Կուլթեամբ կը ծծեն ճերմակ լոյսի ճառագայթ մը կազմող եօթը գոյները. այս պատճառաւ է որ կարգ մը ապակիներ եթէ լոյսին բռնուին՝ կարմիր կ'երեւան: Ծծուած լոյսին քանակութիւնը կախում ունենալով անցած միջավայրին թանձրութենէն, երբ վերոգրեալ մարմինները տարբեր թանձրութիւններու տակ դիտենք զանազան գոյներ կ'առնեն. օրինակի համար, պարապ պրիսմակի մը մէջ լեցնենք բօրթօի գինի և կամ հինէն մնացած օղի. գազաթին կողմէ դիտուելով տարբեր գոյնով պիտի երեւի՝ խարխալին կողմէ դիտուելով տարբեր: Նոյնպէս երկնային ջուր քիմիաչ կան բաղադրութիւնը, որ կը պատրաստուի սիւլֆաթ սը ֆիւլը լուծուած ջուրի մէջ քաղցօնաք ս'ամօնիաք յագեցնելով, կոնսաճեւ գաւաթի մը մէջ լեցնենք, յատակին կողմէ նայուելով լեզակագոյն պիտի տեսնուի, իսկ բերանին կողմէ՝ մանիշակագոյն:

Կազերու ծծումբ՝ հեղուկ եւ հաստատուն մարմիններէ. — (հնգս.) Երբ կազ մը հեղուկէ մը կը ծծուի, կ'ըսենք թէ անոր մէջ լուծուեցաւ: Առնենք մէկ ծայրը գոց և միւսը բաց ապակեայ խողովակ մը (փորձանակ մը) սնդիկով լեցնենք զայն եւ սնդիկով լեցուն ամանի մը մէջ գլխավար շրջենք. ճիշդ ինչպէս որ կ'ընեն սնդիկէ ծանրաչափ մը շինելու թորիչէլիի փորձին մէջ, միայն թէ մեր գործածած խողովակը պզտիկ ըլլալով՝ ամբողջովին լեցուն կը մնայ սնդիկով: Խողովակին մէջ անցնենք որոշեալ ծաւալով թթուածին կազէն, յետոյ չափուած քանակութեամբ ջուր, բնականաբար այս երկու մարմինները՝ իրենց խտութեան պատճառաւ փորձանակին վերի կողմը պիտի հաւաքուին եւ սնդիկն ալ վար պիտի իջնայ, տեղ տալով թթուածինի ու ջուրին, ժամանակ մը ետքը պիտի տեսնենք որ սնդիկը բարձրանալ կ'սկսի խողովակին մէջ. ջուրը՝ ծծելով թթուածինը՝ ծաւալին մաս մը կը քիչնայ, եթէ թթուածինի տեղ ուրիշ կազ մը դնենք՝ օրինակի համար բորակածնի նախօքսիտ, պիտի տեսնենք որ ջուրին մէջ աւելի մեծ քանակութեամբ կը ծծուի քան թէ թթուածինը: Այս փորձով կը հաստատուի թէ հեղուկները կը ծծեն կազերը անհաւասար քանակութեամբ: — Հաստատուն մարմիններն ալ հեղուկներուն պէս կը ծծեն կազերը. Հրաչեկ փայտէ ածուխի կտոր մը սնդիկի մէջ ընկղմելով մարենք և տանինք կազ ամօնիաք պարունակող փորձանակի մը մէջ դնենք՝ որ սնդիկ պարունակող ամանի մը վրայ դարձած է: Սնդիկը անմիջապէս պիտի բարձրանայ փորձանակին մէջ, որովհետեւ հոն գտնուած կազը ամբողջովին ծծուած է ածուխէն: Կազերը ծծելու այս յատկութիւնը մարմինէ մարմին կը տարբերի, փայտէ ածուխը ամենաանակութեամբ. նոյնպէս միեւնոյն մարմինը զանազան քանակութեամբ կազ կը ծծէ, օրինակի համար փայտի ածուխը իր ծաւալին 90 անգամը կազ ամօնեաք կը ծծէ, մինչդեռ հազու երկու անգամը ջրածին կրնայ ծծել: — Կրահամ ապացուցած է թէ մետաղներն ալ սովորական կամ ամենաբարձր բարեխառնութիւններու մէջ կարող են կազեր ծծել: Կարմրնալու աստիճան տաք-

Abstraction

ցած երկաթը՝ իր ծաւալին կէսին չափ ջրածին և կամ չորս անգամին չափ ofuis sp fawպոն կը ծծէ: Պղինձին, ոսկիին, արծաթին, բլաթինին ծծողական կարողութիւնը աստիճանաբար աւելի քիչ է: Սովորական բարեխառնութեան մէջ բլաթինի փոքր-փոքր իր ծաւալին 25 անգամը ջրածին կը ծծէ, այս յատկութեան հետեւանքով եթէ թթուածնի ու ջրածնի խառնուրդի մը մէջ դնենք զայն՝ հրաշէկ կը դառնայ: Վառած կաղէ լամբարի մը բոցին բռնելով բլաթինի կտոր եւ տաքցնենք մինչեւ որ հրաշէկ ըլլայ: յետոյ լամբարը մարենք, բլաթինը կամաց կամաց պաղելով իր հրաշէկութիւնը կը կորսնցնէ, եթէ լամբարին ծորակը նորէն բանանք՝ կազը դուրս պիտի ելլէ եւ ծծուի բլաթինի կտորէն որ կրկին հրաշէկ պիտի ըլլայ եւ կազը բռնկելով լամբարը ինքնիրեն պիտի վառի: Բալատիոմ ըսուած մետաղը ամէնէն շատ ծծելու յատկութիւնը ունի: սովորական բարեխառնութեան մէջ իր ծաւալին 376 անգամը ջրածին կը ծծէ, 90 աստիճան տաքնալով 643ի կը հասնի այդ թիւը, սակայն երբ տաքութիւնը 245 աստիճանի բարձրանայ ծծած ջրածնի քանակութիւնը 526 ծաւալի կ'իջնէ, եթէ Բալատիոմ տախտակի մը մէկ կողմը ջնարակելով ջրածին պարունակող ամանի մը մէջ ընկղմենք, ազատ մնացած երեսը այնքան կազ կը ծծէ որ ընդարձակելով՝ կը կտրնայ:


Հաստատուն մարմինները կրնան ծծել նաեւ հեղուկներ: Օրինակի համար՝ օսլայական ալքօլի և պարզ ալքօլի խառնուրդի մը մէջ եթէ փայտէ ածուխի կտոր մը ձգենք, այս վերջինը կը ծծէ օսլայական ալքօլը և ազատ կը թողու պարզ ալքօլը: Հաստատուն մարմինները կը ծծեն հեղուկները՝ հերաձեւ անօթներու օրէնքին համաձայն: Խոնաւաչափն ալ այս օրէնքին վրայ հիմնուած է որով մագի թելը կը ծծէ օդին մէջի խոնաւութիւնը, — Այս յատկութիւններէ զատ հաստատուն մարմինները կը ծծեն նաեւ հեղուկներու մէջ լուծուած հաստատուն նիւթերը: Օրինակի համար, կենդանական ածուխը որ կը պատրաստուի գոց ամաններու մէջ ոսկորներ կրացնելով, լեղակի ծծմբուկի լուծոյթի մը մէջէն լեղակը կը ծծէ, կիրի լուծոյթներու մէջէն՝ կիրը, կապարի լուծելի աղերը եւայլն: Շաքարի գործարաններու և գտարաններու մէջ կենդանական ածուխի գործածութիւնը սոյն սկզբունքին վրայ կը կայանայ, եթէ այս մարմինէն կտոր մը ձգուի գաւաթ մը կարմիր գինիի մէջ և լաւ մը խառնուելէն ետքը զտոցէ անցուի, վազած գինին բոլորովին գունազուրկ կ'ըլլայ: Շատ անգամ նոր շինուած ջրշղջներու մէջ հաւաքուած ջուրերը կիրի համ մը կ'առնեն: այս անպատեհութեան առաջքը առնելու համար ջուրին մէջ կենդանական ածուխ կը ձգեն՝ որ կիրը ծծելով ջուրին համը փոխել կուտայ:

Abstraction, Վերացում. — (Փիլիսոփ.) Վերացումը գործողութիւն մըն է որով մեր միտքը առարկայի մը բոլոր յատկութիւնները նշանակելէ ետք՝ անոնցմէ մին կ'առնէ անջատաբար եւ զայն կ'զգիացնելով միմիայն անով կ'զբաղի: Երբ մանուշակի մը

Abyssale

գոյնը միայն նկատի կ'առնեմ, առանց անոր հոտը, ձեւը, մեծութիւնը եւայլն դիտելու, վերացում մը ըրած կ'ըլլամ: Այս կերպով է որ կրնանք զանազան առարկաներու մէջ հասարակ եղող յատկութիւններն ու նմանութիւնները որոշել և կազմել ընդհանուր գաղափարներ: Մարդկային բոլոր ծանօթութիւնները վերացումի վրայ հիմնադրուած են. այդ յատկութիւնը որքան կատարեալ ըլլայ մէկու մը վրայ, անոր մտաւոր զարգացումը այնքան բարձր կ'ըլլայ:

Abyssale (faune). — Այս անունով կ'որակեն ովկէաններու անդունդներու խորը ապրող կենդանիները: Առաջները՝ երբ ծովու խորութիւնը չափելու միջոցները տակաւին անբաւական էին, կը կարծէին թէ մինչեւ 15,000 մէթր խորութեամբ անդունդներ կան, սակայն հիմայ հաստատուած է որ ամէնէն խորունկ տեղը 8300 մէթրը չանցնիր: Մինչեւ 1862ի տեսնները կը կարծէին թէ ծովու մակերեւոյթէն 100 մէթր վար կարելի չէ ապրող կենդանի մը գտնել որովհետեւ թթուածնի ու լոյսի անբաւականութիւնը, այդ խորութեան մէջ ջուրին ըրած ձնշումը՝ անկարելի կը դարձնէին կեանքի գոյութիւնը: Սակայն այդ թուականին նշանաւոր բնագետու մը Միլն-էտուարտս, քննելով ընդծովեայ հեռագրաթելի մը մէկ կտորը. նոր գիտեր յայտնեց. այդ պարանը Սարտենիան Ալմերիոյ կը միացնէր և այն կտորը որ քննութեան ենթարկուեցաւ 2800 մէթր խորութեան մէջ գտնուող հովիտի մը վրայ ինկած էր. ասոր վրայ փակած գտնուեցան կենդանիներ որոնք տակաւին կ'ապրէին երբ ջրէ հանուեցան, Ասով կ'ապա-



ցուցուէր թէ ովկէանի անդունդներն ալ իրենց բնակիչներն ունին: Անկէ ի վեր նոր արշաւախումբեր կազմուեցան որոնք մասնաւորապէս քննեցին այդ կենդանիները. Շուէտացի Օսիան եւ Միքաէլ Սարս, Քորէն և Տանիլսըն, անգլիացի Ուայվիլ-Թոմսըն և Քարբանդիէ, ամերիկացի Ակասիս գիտուններու արշաւախումբերն ու Ֆրանսական Թրաւայէօր ու Թալիսման նաւերու սպայակոյտերն: — Մեծ խորութիւններու տակ կեանքի պայմանները շատ ու շատ մասնաւորուած են: Հոն բարեխառնութիւնը շատ



ՅՈՒՆԱՆԻՍ ԿՆՆԱՆԻՍ ԿՆՆԱՆԻՍ

ՀԱՆՐԱՊԻՏԱՆ

ՄԱՆԿԱԿԱՆ ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

ՄԿՕՅԻ ՀԱՇՈՒԵԿՇԻՈՐ

(Շարունակութիւն 5րդ թիւէն եւ վերջ)

Ճանօ. — Իմ մասիս, այս նոր տարին տօնելու դրութիւնը շատ օգտակար կը գտնեմ: Սա մեր զբաղուած ու մեղաւոր կեանքին մէջ գէթ առիթ մը կ'ունենանք վերլիշում մը ընելու անցեալին վրայ. մեր նիւթական կացութիւնը ճշդելու, և մեր վիճակը հասկնալու համար: Մեր այս անապատի ու դաշտի միօրինակութեան ճամբուն վրայ նոր տարիի նորածագ արեւը՝ մեզ կը տանի լեւան մը բարձունքը, որուն վրայէն մարդ անգամ մը ետ կը նայի յետադարձ ակնարկով մը իր կտրած ճամբուն երկարութիւնն ու դժնդակութիւնը չափելու, և անգամ մ'ալ դէպ յաւաջ՝ դիտելու համար ճամբուն մէկ աղօտ երկարածութիւնը, որ լի է շատ մը խոստմնալից անակնկալներով և յուսախաբութիւններով: Այո, նոր տարիին նորածագ արշալոյսը, և վերջացող տարիին արեւմարը ինծի շատ խորհրդածութիւններ կը ներշնչեն: Մահուան ու կեանքի միաւորութեան կէտը: Մերունի մը որ կը մեռնի, մանուկ մը որ կը ծնի:

Սեկֆո. — Մանուկայ այդ պարագան մեզի յուշարար մը կ'ըլլայ ժամանակին արագասահ ընթացքը ազդարարող, որմէ անտեղեակ ու անտարբեր կը փութանք մեր կեանքի կէտ նպատակին: Եւ ահա շոգեկառքին ցնցումները մեզ կ'իմացնեն թէ կ'երթանք... Բայց ո՞ւր և ինչպէ՞ս, երբեք չենք խորհիր:

Ճանօ. — Տարի մ'ալ անցաւ սակայն այդ տարիին 365 օրերը մէկիկ մէկիկ անցան: Ինծի համար կրնամ ըսել թէ նախորդներէն շատ աւելի օգտակար կերպով անցաւ: Սյս տարիին մէջ եղաւ որ առաջին անգամ՝ զգացի զարգացումի պէտքը, և ահա ատոր հետեւանքով մոլի ընթերցող մ'եղայ. միշտ կը փրնտըեմ ամէնէն աւելի հմտալից, գիտական ու գործնական ծանօթութիւններ պարունակող ընթերցանութիւններ ու գիրքեր:

Այս տարուան մէջ աւելի գութկոտ, մարդասէր և ողորմածասէր եղած եմ: Գիտէք թէ ժամանակ մը շատ անտարբեր էի: Այս տարի բոլորովին հակազդեցութիւնը կրած եմ այդ մեղամազճոտ զգացումներու:

Միշտ օգնելու, ուրիշին բարերարելու մէջ՝ երջանկութիւն մը կ'զգամ:

Ուրախ եմ, մանաւանդ, որ վերջացող տարիին այս վերջին վայրկեաններուն մէջ իսկ առիթը ներկայացաւ բարիք ընելու:

Սեկֆո. — Ի՞նչ բարիք, ասանկ գրամական նեղ վիճակի մը մէջ:

Ճանօ. — Մկօ աղբար՝ եղբօրս Նահապետ աղայի գործատան մէջ գիտէք թէ Պապօ անունով խեղճ աղքատ գործատր մը կ'աշխատի: Նոր տարիի առիթով իր չորս զաւակներուն կազանդէք մը հայթայթելու համար, իբր կանխավճար՝ Նահապետ աղայէն քանի մը մէճիտ կը խնդրէ, բայց շատ անողոք կերպով կը մերժուի: Այս ամէնը պատեհութիւնով մը այսօր իսկ լսելով Ղունկիանոս կոչուած ապուշի մը բերնէն, անմիջապէս բոլոր պէտք ըլլալիք առ ձեռն պատրաստ գնելով՝ նամակի մը հետ ղրկեցի Պապոյի տունը: Որքան ուրախ կ'զգամ ինքզինքս, թէւս մեծ բան մը չէր ըրածս և մեծ բան մըն ալ չմնաց իմիններուս ընելիք: Օրհնեալ ըլլայ հին տարին երթայ բարեաւ, հանգիստ քուն կը մազթեմ յաւիտենականութեան գրիին մէջ:

Զարմ. — Երթաս բարեաւ ա՛լ ծերունիդ ալեփառ,
 Յաւիտենին ծոցը հանգչէ դու իսպառ.
 Բանաստեղծիս դուն վառեցիր իմ հանճար,
 Դուն լեցուցիր ներշնչումով զիս, անճառ:

Մկօ. — (Միշտ նայնալով) Ինծի հարցնէք այս հին տարին ինծի ոչ թէ հանճար, այլ բանջարի կտոր մը անգամ շատ աեսաւ:

Մարկ. — Խնդիրը լրջօրէն նկատելով, ինծի համար չիտակը համով տարի մը չեղաւ: Այս միակ տարուան մէջ, ամբողջ քան տարուան մէջ ձեռք բերած հարստութիւնս փճացուցի: Այս տարի կորսնցուցի մէկ հատիկ եղբայրս ու սիրակաթ մայրս: 1903 տարին ասոնք քիչ տեսնելով հինգ հատ ակռաս ալ փտեցուց: Ուրախ եմ որ գոնէ կարճատեւ է տարին, թէ ոչ եթէ քիչ մը աւելի երկար ըլլար, ո՛վ գիտէ դեռ ի՞նչ փորձանքներ պիտի բերէր գլխուս:

Ճանօ. — Եւ սակայն, պէտք չէ մոռնաւ նաեւ թէ այս տարին ալ բեղմնաւոր չըջան մը ունեցաւ մեզի համար առ հասարակ կրթական, գրական ու տնտեսագիտական տեսակէտով: Նոր տարին առանց հինին նոր չէր կրնար ըլլալ: Միշտ հիններն են որ նորը կը պատրաստեն: Է՛. Մկօ, ալ հերիք է այդ որքան երկայն եղաւ: Միլիատէրի մը հաշուեկշիռը դարձաւ:

Այս. — Ահա պատրաստ է, լմնցաւ, ուշադրութիւնս :
(Կ'սկսի բարձրաձայն կարգալ)

Հաշուելիչի Մկո Մլաւեանի, յամի Տեառն Յիսուսի Քրիստոսի
1903 տարւոյն ղեկտ, 31

Պէտք է առանց նախաբանութեան ըսեմ թէ այս տարին ալ իր նախորդներուն պէս 365 օր է, 52 շաբաթ է, և 12 ամիս է կը բաղկանար. թէ ամէն մէկ ամիսը 30 օր, օրը 24 ժամ, ժամը 60 վայրկեան և վայրկեանը 60 երկվայրկեան հաշոււած է : Պէտք չէ չիլիել թէ այս տարին ալ սովորական կարգով ամառ, աշուն, ձմեռ, գարուն ունեցաւ : Թէեւ իմ մասին ձմրան մէջ կ'այրէի, ամրան մէջ կը սառէի, թէեւ գարունը՝ սոխակի մը վարդին սիրոյն համար հառաչելը լսեցի և վարդամոյն արշալոյսին ալ արեւելքի դռներուն բանալին չտեսայ : Հա՞րկ է ըսել թէ այս տարի ալ մարդիկ երկու ոտքով կը քալէին, թէեւ չորքոտանիի պէս խորհողներն ալ պակաս չէին, թէ՛ բերնով կ'ուտէին, գտնուեցան առանց բերնի ուտողներ ալ : և ոմանք ալ, որոնք առանց ուտելու կը մարսէին : Պէտք չէ նաեւ յիշել թէ այս տարի ալ քահանաները արժանապատիւ էին, թէեւ գտնուեցան ալ, որոնք արժանապատուութիւն ըսուած տեսակին շատ կարօտ էին : Թէ Պատ. Թաղական Խորհուրդը, խորհուրդներ ունեցաւ, թէեւ անոնց մէջ երբեմն խորհուրդը միայն կը պակսէր : Թէ ուսուցիչները, մասնագէտ ուսուցիչներ ըլլալու ետեւէ էին, թէեւ Սէրը, Եով գրել՝ աւելի նախամեծար կը սեպէին :

Թէ... դեռ չարունակե՞մ, բայց ես իմ հաշուելիչիս պիտի պատրաստէի :

Այս վերջացող տարւոյն մէջ նորէն սրտահատոր ? եղբօրս քով ծառայութեան մտայ. սակայն, ունեցածս վրայ տալէն զատ հինգ դահ. ալ պարտքով դուրս ելայ : Որովհետեւ իմ մասնաւոր նպատակիս համաձայն ձախդիկութիւնովս՝ չեղաւ օր մը որ առանց վնասի անցընել տայի նահ. աղայի տունը : Օր մը կերակուրի սեղանին ամբողջ կարգ ու ոարքը ահուելի շուռաջիւնով մը տապալեցի՝ սեղանին վրայ ելած ըլլալով՝ լամպարը վառելու համար : Ուրիշ օր մը 100 ոսկինոց ձիուն ոտքը կոտրեցի խրամատէ մը անցնելու պահուս : Անգամ մըն ալ դարակին բոլոր թղթերը անպէտ նկատելով այրեցի, որոնց մէջ մեծ գումարներ պարունակող կարեւոր մուրհակներ ու պանքսիթներ կան եղեր :

Եղբօրս յանձնարարութիւններուն վրայ, սխալ հասցէներով մարդիկ կը կանչէի : Վայրկեան մը անգամ զիս ներս չէր պահեր, եթէ մէկ հօրէ ու մօրէ զաւակ ըլլալով՝ հոգեհատոր եղբայրը գտնուելու հետեւանքով՝ ժառանգակիցը չըլլայի : Օր մըն ալ,

վերջապէս, հիւրերու առջեւ առանց փորձ մաքրած ըլլալու եփած գառնուկ մը հրամցուցի, ասոր վրայ զիս, այլեւս վերջին ծայր զայրացած, տունէն դուրս վռնտեց: Այս ճախլիկ կեանքովս բաւական ելք մը բացած է Նահապետ աղայի հաշտոյն մէջ, կը մնար հիմա մուտք բաժինը լեցնել: Քանի մը ամիսներ դուրսը, հոս հոն սլքտալէն վերջ օր մը, ինչպէս որ ձեզի ալ ծանօթ է, մէկու մը հետ կուի բռնուելով՝ իբր ելք ոտքիս մէկը կորսնցնելէն ու վէրքեր ստանալէն վերջ, զիս մնացածով, իբր մուտք Նահապետ աղբօրս տունը մտցուցին: Հոն քանի մը ամիսներ, հիւանդութեան ջերմ հետեւող մը, շուկայէն ամէն բան մտցնել տուի, հասարակ սենեակս՝ դեղաբանի մը վերածեցի: Ամէնէն խենթ քրահաճոյքներուս գերին ըրի տան բոլոր անդամներն ու սպասաւորները:

Գիշեր մը սոսկալի պոռչաւորք մը վերցուցի, տունը քակելու աստիճան բարձր, քանդի անկիւնէն մուտուքի ու ճըլալու ձայն մը լսեցի. կարծեցի թէ ալն ու գրողը եկած են հոգիս առնելու համար: Դողը, սոսկումը բռնեց զիս, մահուան դողը, սարսուռը, չըջան կ'ընէր երակներուս մէջէն, ալ չէի կրնար համբերել, Անդին եղբայրս հանգիստ կը քնանար. հիմա պիտի վրդովուէր, մանաւանդ մեծ հաւատք ունէր դեւերու վրայ: Ինքն ալ քանի որ անոնցմէ մէկէն վար չէր մնար: Լեղապատառ պիտի գար, խոշոր մահակներով պիտի հալածէր իր երբեմնի անյաջողութիւններուն հեղինակները ոչնչացնելու համար: Ձայնիս ութը խաղերովն ու բոլոր թափովը պօռացի, խորհելով միանգամայն թէ դեւերն ալ թերեւս սարսափին ձայնէս: Չէ՞ որ, երբեմն այլանդակ բաները այլանդակութիւններէն կը վախնան: Տանը բոլոր անդամները ընդոստ արթննալով առանց հագուելու վաղեցին եկան, ոմանք սարսափած՝ իրենք ալ պօռալ կանչել կ'սկսին, այնպէս որ թաղին բոլոր դրացիներն ալ բազմութիւնով մը ձեռքերնին բռնած ահագին մէլթէկներու ձողեր, կը հասնին դող-դիւականները բռնելու համար: Երկար բարակ զիս հարցափորձելէն վերջ՝ սկսան հոս հոն փնտռտուքի ելլել մեծ զգուշաւորութիւնով ու դողով, մանաւանդ, երբ ձայներուն եկած կողմը կը գիմէին: Պահարաններուն դռնակները կը բանային մեծ վախով մը: Կէս ժամէ վերջ շարժուն դարակ մը իր տեղէն վերցնելու ատեն ի՞նչ տեսնեն — Այս բոլոր վիվլուկը, այս բոլոր բազմութիւնն ու հանգիստաւորութիւնը անոր համար որ՝ կատու մը վեց հատ ձագձգներ է: Ի վերայ այս ամենայնի, որով Նահապետ աղան իր տարեգլուխի հաշուեկշիռի մուտքին կողմը վեց ձագի հարստութեան մը փառաւոր արձանագրութիւնը կ'ունենայ:

Ճանճ. — Շիտակը, աղուոր հաշուեկշիռ, Մկօ, կեցցես, ծափահարութիւն մը չարժեքի, նահապետ աղայի կատուններն ալ բաղդաւոր են եղեր որ ծննդաբերութեան մը շուրջը այսքան անօրինակ հանդիսաւորութեան մը պատիւը վայելած են :

Մարկ. — Պատ. Զարմայրն ալ չունի մեզի ըսելիք մը այս դարուն համար, միայն թէ պիտի խնդրէի կանխաւ որ ոտանաւորով չխօսի, քանզի չեմ հասկնար :

Զարմ. — Ո՛հ, 1903 տարուան մէջ, ի՞նչ մեծ մուտք ունեցած եմ. ինչ սիրատարփիկ ոտանաւորներ, ինչ սքանչելի տրամախօսութիւններ, ինչ վէպեր, ինչ փիլիսոփայական ճառեր գրած եմ, որոնք սակայն, աւա՛ղ չեն գնահատուած. չկան, ա՛հ, չկան հիմա մեկեւնասներ, որ հրատարակէին օգտամատոյց երկասիրութիւններս : Այո, այս քաղաքը չկրնար գնահատել իմ այսքան տարիներու մատուցած ծառայութիւններս. ինծի կը պարտին շատերը իրենց յաջողութիւնները, այն բոլոր վաճառականները, բժիշկները, գրագէտները, փաստաբանները, արհեստաւորները իմ ձեռքիս տակէն ելած են : Սակայն, այս տարի, ելքի հաշույս մէջ զիս ալ հանեցին պաշտօնավարութենէս, իբր վարձատրութիւն այնքան տարիներու ծառայութիւններուս : Այո՛, ապերախտ են մարդիկ, մանաւանդ այս տարի, սակայն թէեւ օրական պարէնի կարօտ, կը սիրեմ՝ արօտն ու նարօտ : Կրկին անգամ ինծի մխիթարութիւն մը նկատած եմ այն երկնատուր գըրիչը, որով շարունակ կը գրեմ ընդարձակ ուսումնասիրութիւններ մարդկային ապերախտութեան ու բնաւորութիւններու վրայով : Օ՛հ, եթէ գիտնային թէ, այս աղքատ մարմնոյն մէջ ի՞նչ մեծ մարդ մը կայ :

Ապերախտ մարդկութիւն :

Մկօ. — Հասկցանք, Զարմայր, քու ալ ցաւդ. ի՞նչ կ'ուզես հիմա, ան մեզի ըսէ՛ :

Զարմ. — Ես միայն կ'ուզէի որ սա նոր քերթուածներու տպագրութեան ծախքը հայթայթուէր :

Սեկֆօ. — Խենթ, օրական հացդ չես կրնար ճարել, և կ'ելլես տղայական բաներու ետեւէ կ'իյնաս : Մեղք ես, Զարմայր, պայվելիս, ալ հերիք է. պատառ մը պանիրին հետ շերտ մը հացը 100 տուն ոտանաւորէն աւելի կ'արժէ :

Զարմ. — Ո՛հ, չէք գիտեր, չէք կրնար հասկնալ, զգացում ճաշակ չունիք, ո՛վ պակասութիւն ճաշակի :

Մկօ. — Ալ հերիք չատախօսութիւն ըրինք. Հերիք է որ կերակուրի ճաշակին պակասութիւնը չունինք. ոչ միայն մարդ կեցցէ... ոտանաւորով ու հացիւ, ապուխտին ու գինիին նայինք :

Երթա՞նք ալ, ժամանակը անցեր է: Մնաք բարեաւ պայվելի:
 Ամենքը. — Մնաք բարով, պայվելի Զարմայր:
 (Կ'երթան)

Տ Ե Ս Ի Լ Ե

ՊԱՊՕ, ԳԱՐԵԳԻՆ, ՍԵՆԵՔԵՐԻՄ, ԲԱՐԹՈՂ, ՆՈՐԱՅՐ

Պապօ. — Կը յիշե՞ք տղաքներս, անցեալ տարի այս սեղանին վերեւ ձեր գորովագութ մայրն ալ կար. անկէց ի վեր տարի մը անցած է, սակայն դեռ թարմ կը մնայ մեր սրտերուս մէջ անոր յիշատակը: Ուրախ եմ որ ձեր մօր ինծի յանձնած այս զաւակներս կըլցայ տարի մը ամբողջ ողջ առողջ պահել: Մանաւանդ ուրախ եմ որ դուք ալ ինծի մխիթարութիւն մը եղաք ձեր հնազանդ վարքովը: Շնորհակալ եմ Տէրովմէ որ գոնէ ձեզի պէս անգին հարստութիւն մը ունիմ այս աղքատիկ ու անշուք յարկին ներքեւ: Ձեր ամբողջ զրկանքներուն ու տառապանքներուն մէջ համակերպող սիրտ մը տեսայ ձեր մէջ: Իյս ամէնուն փոխարէն շատ փափաքեցայ որ աղուոր կազանդէքով մը գոնէ պզտիկ փոխարինութիւն մը ընեմ: Սակայն, կը ցաւիմ որ սրտիս ուզածին պէս ճոխ սեղան մը չկըցայ սարքել: Միայն թէ վստահ իմ որ այս քիչին համար ալ գոհունակութիւն մը պիտի յայտնէք: Շնորհակալութիւն Աստուծոյ որ այսքանն ալ մեզի պարգեւած է, մանաւանդ պարտք կը սեպեմ ըսելու թէ անծանօթ բարեկամ մը հաճած է զրկել այս բոլոր նուէրները զորս մէկիկ պիտի բաժնեմ: Այս առիթով, իբր կարեւոր դաս մը նոր տարիին. մի՛ մոռնաք ձեր բարեբարներուն ամէնէն փոքր բարիքը անգամ: Պէտք չէ մոռնալ նաեւ թէ ամէն դարու և ժողովուրդի մէջ մեծ ու բարեսիրտ մարդիկը չեն պակսիր:

Հիմա կ'զգամ թէ անհամբեր էք ձեզի եղած այս բարիքը վայելելու: Եկո՛ւր նայիմ, Գարեգին, ասիկա քեզի համար է, վերարկու մը և գլխարկ մը. բարով հագնիս, կը մաղթեմ որ սիրտդ ալ նորոգուի նոր խորհուրդներով ու որոշումներով: (Գարեգին համբուրելով հօրը ձեռքը՝ կ'առնէ): Դուն եկուր, Սենեքերիմ, այս տափատն ու վերարկուն ալ քեզի համար է, դուն ալ շատ ապրիս, տեսնեմ քեզ դասերուդ մէջ յառաջադէմ ըլլաս: Հապա քեզի, Բարթող, դուն ալ միշտ կարօտը պիտի քաշէիր կօշիկի մը ու գլխարկի մը: Ահա քեզի ա՛լ ասոնք: Բարութեան ճամբուն վրայէն քալէ նոր քայլերով: Այս գուլպան, բաճկոնն ու կօշիկն ալ քեզի համար է, Նորայր, դուն քիչ մը չար ես, կը յուսամ որ նոր տարիէն սկսելով միշտ անունիդ պէս նոր մարդ պիտի մնաս: Եւ Հիմա մրգեղէններն ալ կրնաք ուտել:

Սենեքերիմ, նախ «Հայր մեր»ը ըսէ (Կ'աղօթե)։ Վերջին խօսք մ'ալ, տղաքներս, ըսեմ նաեւ թէ այս կաղանդը պատրաստող բարի հոգին, պզտիկ ծրարի մը մէջ 100 դահեկանի գումար մ'ալ զետեղած է. կ'ուզեմ որ զայն ալ ձեր փափաքին համեմատ նպատակի մը համար գործածեմ։ Անշուշտ անանկ մեծ բաներ չէք ուզեր որ այս գումարը անբաւական գայ։

Նորայր. — Հայրի՛կ, այդ գումարով տուն մը գնենք չըլլա՞ր։

Սեմեմ. — Ի՞նչ կ'ըսես, Նորայր. հարիւր դահեկանով տուն մը կուտա՞ն, Հայրի՛կ, էջ մը գնենք, որպէս զի լեռնէն մեզի միշտ փայտ բերէ որով ձմեռը գոնէ տաքուկ վառարան մը կ'ունենանք։

Նորայր. — Հայրի՛կ, դուն ինչո՞ւ կաղանդ չունիս, այդ գումարն ալ քեզի համար զրկուած ըլլալու է։ Բեզի աղուոր վերարկու մը կարել տուր։

Հայր. — Շնորհակալ եմ ձեր բարի զգացումին համար. կը տեսնեմ որ այս առաջարկութեան ամէնքնիդ ալ հաւանութիւն ցոյց կուտաք։ Սակայն ես կը փափաքիմ որ ատիկա ձեզի համար ալ գործածուի։ Ես ինծի համար պէտք եղածը կը գտնեմ։

Դար. — Իմ մասիս, հայրիկ, եթէ չես ուզեր որ քեզի համար գործածուի այդ գումար, անցեալ օր կարդացի թերթի մը մէջ թէ Բ. Գիւղին մէջ սոսկալի հրդեհ մը պատահեր է, որով շատ մը ընտանիքներ դուրսը մնացեր են անտուն, անօթի, մերկ, Աղէկ չըլլա՞ր որ այս գումարը հոն զրկենք, խեղճ թշուառներուն պզտիկ օգնութիւն մը ըրած ըլլալու համար։

Սեմեմ. — Այո՛, այո՛, հոն զրկենք, հայրիկ, որքան խեղճ են անոնք, մինչդեռ մենք ամէն բան ունինք հոս։

Հայր. — Շատ ուրախ եմ. յաւակներս, ձեր սրտերուն մէջ ծնունդ առնող այս ազնիւ զգացումներուն համար։ Ասով ինքզինքս լիովին կաղանդուած կ'զգամ, գթութեան այս ցոյցովը։ Բարիք մը, իր ամէնէն բարձր եղանակովը գործածուած կ'ըլլայ, բարիքն ալ բարիքի համար գործածուելով։ Ապրի՛ք, զաւակներս։

491-120

Վ Ե Ր Զ

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԻՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԳԻՉ
Կ.ՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐՍԱՆ

Կ. Պոլիս, Պապր Ալի Տատտէսի, Թիւ 38

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ հը հրատարակուի շաբաթական 20 էջէ բաղկացեալ :

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր :

Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ Համար

30 ղրուշ

Գաւառաց »

35 »

Արմասահման

45 »

Հատը

30 փարայ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ ԳՈՐԾԱԿԱԼՔ

Ամասիա, Հայկազուն էֆ. Խանդամուր
Ասաբազար, Աշոտ էֆ. Պազ Վազեան
Գօնեա, Տիգրան էֆ. Յ. Տիւրկէրեան
Եւթոկիա, Խաչիկ էֆ. Դ. Թաշճեան
Երզնկա, Պարոյր էֆ. Արզուման
Զմիւռնիա, Կարապետ էֆ. Մալէճանեան
Էրզրում, Տիգրան էֆ. Բրուտեան
Էրպա՛ւ, Միսաք էֆ. Ս. Մելգոնեան
Թալաս, Կարապետ էֆ. Գօճաեան
Թեֆրեսաղ, Ասատուր էֆ. Արսէնեան
Թրիպօլի Գրիգոր էֆ. Հ. Գարագաշեան
Խաբեբը, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Կեսարիա, Երուանդ էֆ. Երկաթեան
Կիրատուն Թովմաս էֆ. Գարագաշեան
Կիւրիկ, Գրիգոր Մ. էֆ. Խանդամուր
Հալեպ, Ս. էֆ. Պօտիկեան
Հիւսէյնիկ, Կ. էֆ. Մ. Յովսէփեան
Մալաթիա, Արժ. Տ. Գրիգոր Վահ. Թաշճեան
Մարաշ, Արժ. Տ. Նէրսէս Քհ. Շահինեան
Մարզուան Արամ էֆ. Գարակէօզեան
Միացեալ-Նահանգներ, Մ. Մ. Քարալալուրեան և Ընկ.
Նիկիմիդիա, Յակոբ էֆ. Տ. Ազարեան
Նիսսար, Յովհաննէս էֆ. Փանոսեան
Շապին Գարա հիսար. — Գագիկ էֆ. Օզանեան
Սամսօն, Յովհաննէս էֆ. Նիքսարլեան
Սրվազ, Միհրան էֆ. Իսպիրեան
Տիւրքմէն, Լևոն էֆ. Սրապեան
Օրսու, Յովհաննէս էֆ. Հէքիմեան